ՍՈՂՈՄՈՆ ԱԲ.— Մբ. 1475ին Ս. Փրկչի վանքին մէջ կ'ընդ-օրինակէ Աւետարան մը (ՄՁ. Թ. 1943) ուր կը գրէ հետևեալ յիշատակարանը. «... Արդ գրեալ եղև սա ի ս. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ կափարիչ ս. վիմիս Գերեզմանին Քի. և սուրբ բանտիս. և այլ ամենայն սուրբ տնաւրինականացս Քր. Այ. որ կան ի սբ. քաղաքս Երսղմ. ի թվին հայոց ՉԻԴ (=1475), ի հայրապետութեան Սսոյ հայոց տեառն Ստեփաննոսի, և յեպիսկոպոսութ. սուրբ քաղաքիս Երուսաղէմի տէր Մկրտիչ Արհ-եպիսկոպոսի ի խնդրոյ վերոգրեալ Մխիթար քհ.ի Հեշատեցւոյ: Արդ աղաչեմ զձեզ հանդիպողդ սուրբ Աւետարանիս, յիշեցէք... զՄխիթար քհնյ. որ ստացաւ զսուրբ աւետարանս և եդ զսա ի Ս. Փրկիչ ի յիշատակ... հաւրն իւր Զաքարիային և մաւրն իւր Սատատին և եղբարց իւրոց հանգուցելոց ի Քս. Ստեփանոսին. և Զաւպանին և քուերցն Շահարին և Մրուսաթին և եղբաւր որդւոց իւրոց Մկրտչին և Զաքարին...»: Այլ և յիշեցէք զփակակալ սբ. Փրկչին. զտէր Տաւնապանն և զհայր Թադիոսն. որ աշխատեցաւ ի սրբագրելն զսբ. աւետարանս. և զճգնազգեաց հայրն Շրուանչայ, նաև զուայիս Ղազարն: Արդ գրեցաւ սա ի լաւ և յընտիր աւրինակէ ձեռամբ յոգնամեղ և անարհեստ փծուն գրչի, պիտակ և սուտ անուն Սողոմոն աբեղայի, որ անուամբս միայն կոչիմ և գործով եմ տարագիր և յոյժ հեռի զի...

Ի թվիս հայոց ՉԻԴ (=1475), յորում գրեցաւ սբ. աւետարանս, առին զկաֆան տաճիկն և արարին բազում գերութիւնս և աւերումն, և եղև յոյժ տրտմութիւն և սուգ քրիստոնէից. և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղայ մերոց. և ի միւսում ամի ՉԻԵ (= 1476) թվին առին Վրացիքն զԳողգոթայ ի հայոց և ի նոյն ամի հայերն գնացին ի սուլթանն ու առեալ հրաման՝ եկին և չինեցին զնոր Գողգոթայի սանդուխն և ուրախացան:» (Խաչ. Ցուց. տետր. Բ., էջ էջ 146—47):

ՍՈՍԹԵՆԷՍ ԱԲ.— Իր այցելութեան առթիւ Ս. Հրեշտակապետի վանքին կը նուիրէ բոլորգիր ճաշոց մը, իր կողմէն ընդօրինակուած Սուրղաթի մէջ (Ղրիմ) ՉՂԹ (=1350) թուին:

ՍՈՒՐԷՆ ՎՐԴ. ՔԷՄՀԱՃԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— Մբ. Ը. 1885ին. Ձռ. 1918ին. ՏՊ. (1922—26). ՏԴ. (1926—29). Ատենապետ Միաբ. Ընդհ. Ժողովին 1929ին: